Մեր խմբագրութեան մէջ ստացուել են մի քանի տեղերից նամակներ, որոնցով հարցնում են, թէ ինչպէս պէտք է յաւերժացնել այդ յօբելեանը, երբ, ուր և ինչ ծրագրով պիտի կատարուի այն, որ իրանք էլ մասնակցեն ըստ պատշաճին։ Իսկ յատկապէս Բագուից մեզ հարցնում են, թէ ինչ եղանակով կարող են իրանք գործի հրաւիրել պ. Սպանդարեանին, մանաւանդ ազգային ներկայ հրատապ խնդիրների ժամանակ։

Երբ մասնաժողով ու ծրագիր կկազմուի այդ նպատակով, մենք 'ի հարկէ կծանուցանենք մեր թերթի մէջ և մենք հաւատացած ենք, որ ազգային-յառաջադիմական ուղղութեան համակրող հասարակութիւնը գաւառներում էլ ամեն տեղ կմտածէ, թէ ինչ եղանակով պիտի մասնակցեն այդ յօբելեանին։

Մեր ստացած մի քանի տեղեկութիւններից գիտենք, որ իրեն խմբագրին ևս առաջարկներ են եղել «Նոր-դարի» վերսկսելու առթիւ և արդէն պատրաստութիւններ են տեսնուում, որ մօտերս թերթը լոյս տեսնի։

ԳՈՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յունվարի 26-ին, «Աղբիւր»ի 25-ամեակը լրանալու օրը, նոյն ամսաթերթի խմբագրատանը ժողովուած հասարակութիւնը՝ բաղկացած գլխաւորապէս «Աղբիւր»ի աշխատակիցներից, ինչպէս նաև պատուաւոր հիւրերը յանձնարարեցին բժշկ. Բ. Նաւասարդեանին հրաւիրել յատկապէս մի ժողով՝ խորհրդակցելու համար, թէ ինչպէս տօնել «Աղբիւր»ի 25-ամեայ յօբելեանը։

Բ. Նաւասարդեանը կատարեց իւր վրայ դրած պարտաւորութիւնը, հրաւիրելով առաջին մասնաւոր հիւանդանոցում

մի բաղմամարդ ժողով, որին և նախագահումէր ինքը, իսկ քարտուղարն էր բժշկ. Ա. Շխեան։

Ժողովը վճռեց՝

1) Աչքի առաջ ունենալով «Աղբիւր»ի կատարած օգտաւէտ և բեղմնաւոր դերը հայ մանուկների դաստիարակութեան ասպարիզում 25 երկար տարիների ընթացքում,—տօնել արժանավայել կերպով «Աղբիւր»ի յոբելեանը, որի համար և ընտրել մի յանձնաժողով։

2) Քանի որ այսօր հայ դրական հրապարակի վրայ դրուած է արդէն Լէօի յոբելեանը, յանձնաժողովը սկսի իր գործունէութիւնը այդ յոբելեանից յետոյ, այն է սոյն թուի մայիսի 4-ից յետոյ։

3) «Աղբիւր»ի յոբելեանը տօնել սոյն թուի աշնանը, իսկ թէ ո՞ր ամսի ո՞ր օրը,—թողնել յանձնաժողովի հայեցողութեանը։

4) Յանձնաժողովը դիւաւորապէս պիտի ջանայ ոյժ տալ յոբելեանի նիւթական կողմին, քան հանդիսական, որպէս զի կարելի լինի պատշաճաւոր կերպով ապահովել «Աղբիւր»-ի մշտատև գոյութիւնը։

Ժողովը միաձայն ընտրեց յոբելեանական յանձնաժողովի համար հետևեալ անձերին՝ Իշխանուհի Սոֆիա Արղութեան—Երկայնաբազուկ. տ. տ. Հեղինէ Առստամեան, Յուլիանէ Սպէնդիարեան, պ. պ. Գ. Բարխուդարեան, Գ. Բաշինջանեան, Ա. Մելիք-Աղարեան, Ի. Յարութիւնեան, բժշկ. Բ. Նաւասարդեան, Նար-Դոս. բժշկ. Ա. Շխեան, Յ. Սպէնդիարեան, Յ. Սոլովեան և Ա. Քալանթար։

Յանձնաժողովն իրաւասութիւն ունի զօրացնելու իր կազմը, ըստ իր հայեցողութեան, և այլ անձերով, երբ այդ հարկ համարէ։

Փետրուարի 29-ին յանձնաժողովն ունեցաւ իր առաջին նիստը և նախագահ ընտրելով բժշկ. Բ. Նաւասարդեանին, իսկ քարտուղարներ՝ Նար-Դոսին և բժշկ. Ա. Շխեանին, զբաղուեց իր առաջիկայ գործունէութեան ծրագրով։

Նախագահ՝ Բժշկապետ Բ. Նաւասարդեան։
Քարտուղարներ՝ Բժ. Ա. Շխեան, Նար-Դոս։